Արձանագրություն N 2

«ԲՄԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2025-01» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

20 դեկտեմբերի 2024թ.
Ժամը 11:30

Մասնակցում էին հանձնաժողովի
Անդամներ՝ Ալմաստ Հարոյան, Նաիրա Խաչատրյան
Քարտուղար՝ Վարդան Հովհաննիսյան

Բացակայում է՝ Սվետլանա Գրիգորյան

1. Հրավերի վերաբերյալ հարցումների և տրված պարզաբանումների վերաբերյալ

ա/ գնման առարկայի տեխնիկական բնութագրի մասով հարցումներ չեն ստացվել,
բ/ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. «ԲՄԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2025-01» ծածկագրով ընթացակարգի հայտերի ներկայացման վերաբերյալ.

Գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 20.12.2024թ. ժամը 11:30-ին փակվել է հայտերի գրանցամատյանը և հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու պահին հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

2.1 Հայտեր ներկայացրած մասնակիցները՝

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Մասնակցի տվյալները
1.	«Սանարե-Ֆարմ» ՍՊԸ	ք.Արտաշատ, Օգոստոսի 23փող., 23շ., 13/1, հեռ. 091 403299, sanare2008@gmail.com

2.2 Տվյալներ ծրարը կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին.

Մասնակից ընկերության կողմից ներկայացված ծրարը կազմված է **«ԲՄԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2025-01»** ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

2.3 Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

«ԲՄԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2025-01» ծածկագրով մրցույթի մասնակից ընկերության փակ կնքված ծրարով ներկայացրել են.

- ✓ Դիմում հայտարարություն գնման ընթացակարգին մասնակցելու (Հավելված 1)
- ✓ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր (Հավելված 1.1)
- ✓ գնային առաջարկ (Հավելված 2)
- ✓ հայտի ապահովում:

Վերոնշյալ ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերը կազմվել են բնօրինակից և պատճենից, փաստաթղթերի բոլոր էջերը կնքված և ստորագրված են մասնակիցների կողմից:

2.4 Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի սահմանված պահանջներին համապատասխան կազմած լինելու մասին.

Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են **«ԲՄԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2025-01»** ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

2.5 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների վերաբերյալ /ՀՀ դրամ/

Մասնակցի գնային առաջարկը հետևյալն է.

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Չափաբաժնի անվանումը և համարը՝ 1 Ջրծաղիկի դեմ պատվաստանյութ (գնման գինը՝ 80 000 000)		
		Առաջարկված գինը՝ առանց ԱԱՀ	ԱԱՀ	Առաջարկված գինը՝ ԱԱՀ ներառյալ
1	«Սանարե-Ֆարմ» ՍՊԸ	103 360 000,0	20 672 000,0	124 032 000,0

3. Հայտերի գնահատման վերաբերյալ.

ա/ հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում «Սանարե-Ֆարմ» ՍՊԸ հայտում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ չեն արձանագրվել

Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացրած գնահատման թերթիկները

4. Հանձնաժողովը որոշեց.

ա/ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 40-րդ կետի 6-րդ ենթակետի կարգավորումները ընտրված մասնակից ճանաչել՝ «Սանարե-Ֆարմ» ՍՊԸ-ին:

բ/ պայմանագիր կնքելու առաջարկություն ներկայացնել «Սանարե-Ֆարմ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝
Կողմ՝ 2 Դեմ՝ 0

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ստորագրությունները

Հանձնաժողովը
Նախագահող՝ _____ Ալմաստ Հարոյան

Անդամներ՝ _____ Նաիրա Խաչատրյան

Քարտուղար՝ _____ Վարդան Հովհաննիսյան